ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ք. Երևան «13» փետրվարի 2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ա. Առաքելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Ա. Աբալյան

Ն. Վահրամյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Գ. Փաշիկյան

Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Էլինա Պողոսյան

Օրակարգ

1. **«ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08»** ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը:
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:
3. **«ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08»** ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
5. Հաջորդ նիստի կայացման մասին:

1. « ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը

(Է. Պողոսյան**)**

1.1««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար «սննդի պատրաստման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ
2	«Եղվարդի Նեկտար» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

(Է. Պողոսյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Աղյուսակ1

N	Չափաբաժնի անվանումը	Չափման միավոր	Նախահաշվային գին	Մասնակցի անվանումը	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Մասնակցի առաջարկած գին /առանց ներառյալ ԱԱՀ/
1	Սննդի պատրաստնման ծառայություններ	դրամ	130 305 000	«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ	92 557 900	18 511 580	111 069 480
				«Եղվարդի Նեկտար» ՍՊԸ	103 416 667	20 683 333	124 100 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. «ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Է. Պողոսյան)

3. 1 Մասնակիցների էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի. բացառությամբ «Պրոդինվեստ» ՍՊ ընկերության հայտի:

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են :

3.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ «Պրոդինվեստ» ՍՊԸ-ի հայտի.

ՀՀ ֆինանսների նախարարի 01.03.2023 թ. N 87-Ա հրամանով հաստատված ծառայությունների ձեռքբերման հրավերների օրինակելի ձևերի բանկային երաշխիքի տեսքով հայտի ապահովման մեջ (էլեկտրոնային ձևով կազմակերպվող ընթացակարգերի դեպքում՝ Հավելված 3)՝ որպես բենեֆիցիարի հաշվեհամար պետք է նշվի պատվիրատուի հաշվեհամարը:

Վերոգրյալի կապակցությամբ ներկայացվում է, որ եթե պատվիրատու է հանդիսանում պետական կառավարման մարմինը, ապա պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների շրջանակում պատվիրատուների կողմից կազմվող հրավերներում հայտի ապահովմանը վերաբերող բանկային երաշխիքներում նշվում է «900008000466» գանձապետական հաշվեհամարը, իսկ այլ պատվիրատուների (այդ թվում պետական մասնակցություն ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների դեպքում)՝ նշվում է համապատասխան պատվիրատուի հաշվեհամարը:

Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի.

- 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է.

- 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները.

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության և նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը գնահատում է պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

3. 4 Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել էր «Պրոդ Ինվեստ» ՍՊ ընկերության հայտը համարել անհամապատասխան «ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և մերժել /**Արձանագրություն 3**/:

3. 5 Հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ գնման ընթացակարգը կասեցվել է 14. 11. 2024թ-ից:

3. 6 Գնման ընթացակարգի կասեցման դադարեցման և ընթացակարգի շարունակման համար ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ գրությունով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, և ստացել է հետևյալ պատասխանը , որով առաջարկվում է քննարկել խնդիրը ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08 ընթացակարգի կասեցումը վերացնելու նպատակով դատարան համապատասխան միջոնադրություն ներկայացնելու միջոցով լուծելու հնարավորության հարցը:

3. 7 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25/08 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայցադիմումի վերաբերյալ կայացված վճիռը /**Գործ թիվ ԵԴ2/9492/02/24 /** gnumner.am հրապարակվել է 20/01/2025թ:

3. 8 Գնման ընթացակարգի վերաբերյալ 2025թ. փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով, ստացել ենք որոշում ՀՀ Երևան քաղաքի վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից

26.12.2024 թվականի թիվ **ԵԴ2/9492/02/24** վճռի դեմ, «Եղվարդի Նեկտար» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին:

3. 9 Հաշվի առնելով, որ նշված ծառայության ձեռքբերումը ընկերության համար համարվում է հրատապ և, ՀՀ Երևան քաղաքի վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կայացնելու ժամկետները անորոշ են, հանձնաժողովը որոշեց հիմք ընդունել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ **ԵԴ2/9492/02/24** վճիռը, մինչև ՀՀ Երևան քաղաքի վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վճիռ կայացվելը:

3. 10 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի . «**ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև դատարանի որոշման վերաբերյալ ընդունված վճռի՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ»:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

<u>4. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:</u>

4. 1 Հաստատել հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն Երևան քաղաքի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ **ԵԴ2/9492/02/24** վճռի և **«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ին 1**-ին չափաբաժնի մասով առաջարկել կնքել պայմանգիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Հաջորդ նիստի կայացման մասին

5. 1 Սահմանել, որ հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա պայմանագրի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Աճառյան 1-ին նրբ. , շենք 21 /հաշվապահություն/ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Առաքելյան

Անդամներ՝ _____ Գ. Փաշիկյան

_____ Լ. Հովհաննիսյան

_____ Ա. Աբալյան

_____ Ն. Վահրամյան

Քարտուղար՝ _____ Է.Պողոսյան